

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

01.02.2019

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 21-ը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
/Ձեկուցող՝ Վ. Աղաբաբյան /
2. 2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցերի և լուծարքային հանձնաժողովների հարցը
/Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/
4. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան /
5. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա II կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան /
6. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքի մասին: Նշվեց, որ ձմեռային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Ձեկուցողը ընդգծեց, որ տարեցտարի բարձրանում է ստուգարքներին և քննություններին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 87,08%: Դա բացատրվում է նրանով, որ տվյալ առարկայի նյութը մաս-մաս յուրացնելով, կիսամյակի ընթացքում պարբերաբար միջանկյալ քննություններ հանձնելով՝ ուսանողը եզրափակվիչ քննությանը

ներկայանում է պատշաճ գիտելիքներով: 2018-2019 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 271 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 27 ուսանող, գերազանց և լավ՝ 67, խառը գնահատականներ՝ 139, իսկ միայն բավարար՝ 3 ուսանող: 35 ուսանողներ չեն կարողացել հանձնել քննությունները և իրենց ուժերը կփորձեն լուծարքային շրջանում: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Մեկ անբավարար է ստացել 22, երկու անբավարար՝ 6, երեք և ավելի անբավարար՝ 7 ուսանող: Զեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

- Պատմություն՝ 11
- Հայոց լեզու և գրակ.՝ 2
- Անգլերեն լեզու և գրակ.՝ 6
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 160

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքը: Նշվեց, որ փետրվարի 6-ից սկսվում է 1-ին լուծարքային շրջանը: Դեկանը կարևորեց գործընթացը և համապատասխան հանձնարարականներ տվեց կրթական ծրագրերի ղեկավարներին՝ լուծարքային շրջանի հետ կապված: Զեկուցողը նշեց, որ ստեղծվել են քննաշրջանի՝ լուծարքային շրջանի առարկայական հանձնաժողովներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի 1-ին լուծարքային շրջանի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 3-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Կ. Պողոսյանը փաստեց, որ ֆակուլտետում նվազում է անընդմեջ ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների թիվը, որը խոչընդոտում է նրանց անվանական կրթաթոշակի ներկայացնելուն: Այդուհանդերձ, նման ուսանողներ կան, և պետք է խրախուսել նրանց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

«Պատմություն» կրթական ծրագրի պատասխանատու Ն. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանող Վանուհի Գևորգյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, և այդ պատճառով նպատակահարմար է Վանուհի Գևորգյանին առաջադրել «Միիթար Գոշ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Ա. Մարդանյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Եգանյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, չորս կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է

գերազանց առաջադիմություն, և այդ պատճառով նպատակահարմար է Լիլիթ Եգանյանին առաջադրել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի թեկնածու:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ղեկավար Շ. Գրիգորյանը նշեց, որ ուսանողների մեջ իր առաջադիմությամբ, կարգապահությամբ և ակտիվությամբ աչքի է ընկնում 4-րդ կուրսի ուսանող Լիլիթ Ֆարմազյանը: Վերջինս մշտապես ակտիվ է թե՛ դասերի ընթացքում, թե՛ հասարակական հանձնարարություններ կատարելիս, հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ուստի և նպատակահարմար է Լիլիթ Ֆարմազյանին առաջադրել «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

Զեկուցողը առանձնացրեց նաև նույն կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանող Մանե Գաբրիելյանին: Վերջինս երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Մանե Գաբրիելյանին զեկուցողն առաջարկեց որպես «Վազգեն Սարգսյանի» անվան կրթաթոշակի թեկնածու:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի պատասխանատու Լ. Թումանյանը առանձնացրեց 3-րդ կուրսի ավագ Աստղիկ Ղազարյանին: Զեկուցողը նշեց, որ վերջինս հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Աստղիկ Ղազարյանին ներկայացնել որպես «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի թեկնածու: Զեկուցողը առանձնացրեց նաև նույն կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Գոհար Մխիթարյանին: Վերջինս երեք կիսամյակ անընդմեջ ցուցաբերել է գերազանց առաջադիմություն: Գոհար Մխիթարյանին զեկուցողն առաջարկեց որպես «Մոնթե Մելքոնյանի» անվան կրթաթոշակի թեկնածու:

Հեռակա ուսուցման բաժնի վարիչի տեղակալ Մ. Սարուխանյանը առանձնացրեց «Հոգեբանություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանող Նաիրա Լազարյանին: Զեկուցողը նշեց, որ վերջինս երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունի: Զեկուցողը առաջարկեց Նաիրա Լազարյանին ներկայացնել որպես «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատել Վանուհի Գևորգյանին որպես «Մխիթար Գոշ», Լիլիթ Եգանյանին՝ «Շառլ Ազնավուր», Աստղիկ Ղազարյանին՝

«Գրիգոր Նարեկացի», Լիլիթ Ֆարմազյանին՝ «ԵՊՀ», Մանե Գաբրիելյանին՝ «Վազգեն Սարգսյան», Գոհար Մխիթարյանին՝ «Մոնթե Մելքոնյան» և Նաիրա Լազարյանին՝ «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Ձեկուցողը հանգամանալի ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածությունները:

Դեկանը նշեց, որ ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի տասնմեկին: Արդեն պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները, ձմեռային քննաշրջանի 1-ին լուծարքային շրջանի գրաֆիկները: Ձեկուցողը նշեց, որ մի շարք կուրսեր փետրվարի 11-ից մարտի 11-ն ընկած ժամանակահատվածում դպրոցներում կանցկացնեն ուսումնական պլանով նախատեսված մանկավարժական և արտադրական պրակտիկա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, Մ. Թամրազյանը, Շ. Գասպարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 1. 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:*

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Ձեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2018-2019 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել

Ճկուն և արդյունավետ: Դեկանը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, Բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան

Վ. Աղաբաբյան